

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության և Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի միջև փոխօգնություն ցուցաբերելու կարգի մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը և Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն, այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով 1994թ. ապրիլի 15-ին Մոսկվա քաղաքում ստորագրված «Մաքսային բնագավառում համագործակցության և փոխօգնության մասին» Համաձայնագրի 16-րդ հոդվածով, այսուհետ՝ Համաձայնագիր, համաձայնագրի իրագործման մեխանիզմների հաստատման նպատակով, պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը լիազորում են իրենց կենտրոնական ապարատի համապատասխան ստորաբաժանումներին և մաքսատներին, որոնք նշված են սույն Արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներում, հաստատել և պահպանել անմիջական հաղորդակցություն Համաձայնագրում նախատեսված դրույթների կատարման նպատակով:

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են փոփոխել կամ լրացնել հավելվածները՝ միմյանց պարտադիր տեղեկացնելով այդ մասին:

Հոդված 2

Համաձայնագրի շրջանակներում իրականացվող համագործակցության արդյունավետության գնահատման և մաքսատների գործունեության այլ արդիական հարցերի քննարկման նպատակով անհրաժեշտության դեպքում կանցկացվեն կենտրոնական ապարատների համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների հանդիպումներ:

Հոդված 3

Համաձայնագրի հիման վրա՝ կենտրոնական ապարատների համապատասխան ստորաբաժանումները և առանձին մաքսատները հարցման դեպքում միմյանց կտրամադրեն տեղեկություններ մաքսային արժեքի զգալի նվազեցումների մասին, կփոխանակեն այն ապրանքների ցանկերը, որոնց նկատմամբ կիրառվում են ներմուծման, արտահանման և տարանցման արգելքներ, այն ապրանքների ցուցակները, որոնք թույլատրվում են ներմուծման, արտահանման և տարանցման Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրվող թույլտվությունների առկայության դեպքում, ինչպես նաև կտեղեկացնեն միմյանց այդ ցուցակներում ցանկացած փոփոխության և լրացման մասին:

Հոդված 4

1. Օգնության մասին հարցումները և դրանց պատասխանները Համաձայնագրի շրջանակներում կփոխանցվեն գրավոր, այդ թվում՝ հեռաֆաքսով, տելեքսով և կապի այլ միջոցներով:

2. Անհետաձգելի դեպքերում կարող են կիրառվել բանավոր հարցումներ, սակայն դրանք պետք է անհապաղ հաստատվեն գրավոր: Հարցում կատարող Կողմի հեռաֆաքսով, տելեքսով և կապի այլ միջոցներով փոխանցված հարցումները պետք է հաստատվեն նամակով:

3. Հարցում ստացող Կողմերի կենտրոնական ապարատների համապատասխան ստորաբաժանումները և առանձին մաքսատները պետք է տրամադրեն հարցվող տեղեկությունները և փաստաթղթերը առանց հետաձգելու:

4. Օգնություն ցուցաբերելու մասին հարցումները և դրանց պատասխանները կներկայացվեն ռուսերեն լեզվով:

Հոդված 5

Օգնության մասին հարցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա) հարցում կատարող կենտրոնական ապարատների համապատասխան ստորաբաժանումների և առանձին մաքսատների անվանումները,

բ) հարցվող գործողությունները,

գ) հարցման առարկան և պատճառը,

դ) գործի բնույթի կարճ նկարագրումը և իրավաբանական որակավորումը,

ե) հարցմանը վերաբերող օրենքներն ու այլ նորմատիվ փաստաթղթերը,

զ) առավելագույն ճշգրիտ և սպառիչ տվյալներ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասին, որոնց նկատմամբ պետք է կատարվի հետաքննություն:

Հոդված 6

Մույն Արձանագրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և դադարում է գործել Համաձայնագրի հետ միաժամանակ:

Կատարված է Երևան քաղաքում 2000 թվականի հոկտեմբերի 31-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մույն Համաձայնագրի մեկնաբանման նպատակով նախապատվությունը տրվում է ռուսերեն լեզվով տեքստին:

***Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2000 թվականի հոկտեմբերի 31-ից:**